

ՂԱԼԱԳԷ ԳԻՒՂԸ

Ղալազէ հաւոց գիւղը, Գեօղչալի գաւառում, ներկայ հոկտեմբեր ամսի 8-ին ենթարկւեց մի մեծ աղէտի, հրդեհի պատճառով, որի մասին գաւառապետ պ. Բողդանովիչը, դրդած լրագիրներում հաղորդած լուրերից, հետեւաւն է լալանում «Նովոե Արագրենիե թերթում».

«Ղալազէ գիւղում հրդեհն սկսեց հոկտեմբերի 8-ին ցերեկաւ 12 ժամին մի կալծից, որ թոճրից ընկել էր խոտի գեղի վրայ, Սասաիկ քամու շնորհիւ հրդեհն արագ տարածւեց և դադարեց միայն միւս օրը, Այրւեցին հաւոց եկեղեցին իւր բոլոր զարդերով, հաւոց ծխական դպրոցը, պահեստի շտեմարանում հաւաքած հացահատիկները, 114 տուն իրանց մէջ պարունակած բոլոր շարժական ստացւածքով, Բացի այս ալրւեցին 3 տղամարդ, 10 կին և 9 երեխայ, ընդամենը 22 հոգի, իսկ աւելի քան տասը մարդ վէրքեր ստացան»¹⁾։

Նոյն գրութիւնից տեղեկանում ենք, որ Ղալազէն ունէր 296 ծուխ բնակիչ, որոնցից անտեղ են մնացել 114 տուն, հետևապէս առնւազն 600 հոգի. Այլ աղբիւրների համեմատ ալրւել են 170 տուն.

Մեր երկրում աղղայիսի մի աղէտ սովորական հրեղիթների կարգումը չէ, Յուսալով որ կառավարութիւնը և հասարակութիւնը օգնութեան ձեռք կը կարկառեն թշուառներին, ստորեւ գնում ենք հետեւեալ տեղեկութիւնները.

Ղալազէ գիւղը գտանւում է Բաքաւ նահանգի Գեօղչալի գաւառում (որ արեւմտեան կողմից հարեան է Արեշի և Նուխաւ գաւառներին, հարաւից՝ Զեւադի գաւազին, արեւելքից՝ Շամախու գաւառին, հիւսիսից՝ Դաղստանին)։ Գաւառի երկու վարչական վիճակներից (Բարգուշէտի և Լաիճի) նա գտանւում է Լաիճի վիճակում. Ամբողջ գաւառում կան 107 արքունական գիւղեր, որոնք ներկայացնում են 122 բնակեցրած տեղեր, քանի որ կան մի քանի բնակեցրած կէտեր, որոնք առանձին գիւղեր չեն

¹⁾ Շատ աչքի է ընկնում կրած վնասների գատաւորութիւնը, որ բնորոշ է տեղական վարչութեան համար. ամենաղղալի կորուստները՝ կենդանի մարդկանց կորուստը, ապա 114 տների ալրւելը դրած են հոգքը.

հաշվում Գիւղերից թրքական են՝ 71, հակական են՝ 16, թաթերինն են՝ 8, հապուտլիններինն են՝ 6, ռսական են՝ 3, արարական են՝ 2, հրէական է՝ 1:

Հակական գիւղերն են՝ Բողաւանդ 28 տուն (1885 թականին), Ղաւազէ, ալթմ 296 տուն, Ուշթալ 109 տ. (1885 թւին), Ուրուշանքենդ, Սուլթանքենդ կամ Ազալէն 74 տ., Ենգիքենդ-Շեքիրլի 28 տ., Գիրք 175 տ., Գիրք-Գիւզլարան, Թոքիշէն կամ Թոքիքենդ 83 տ., Քելքենդ 97 տ., Ֆաթաղլի 33 տ., Աւանտշէն կամ Ղոշաքենդ 115 տ., Գերմանիա 45 տ., Գանձակ կամ Մեծ-Գենդա 124 տ., Փոքր Գենդա:

Ասպիտով մենք տեսնում ենք, որ Ղաւազէ գիւղը գաւառի բոլոր հալ գիւղերի մէջ ամենամեծն է: Բայց և առհասարակ գաւառի բոլոր գիւղերի մէջ իւր մեծութեամբ Ղաւազէն բռնում է երրորդ տեղը՝ Լաիճ (700 տուն) և Կաղիան (301 տուն) գիւղերից յետոյ:

Գաւառն ունէր 1885 թ. ընդամենը 49.456 բնակիչ արքունական գիւղացիներից, որոնցից 9586 հոգի հայեր, որոնք բացի հինգ տնից կամ մօտ 40 հոգուց՝ բոլորը լուսաւորչական էին: Ղաւազէ գիւղը 1885-ին հաշվում էր 1474 հոգի երկու սեռի:

Գեօգրափի գաւառի հալ բնակիչները մեծ մասամբ գաղթել են Ղաւազաղից ներկալ դարու սկզբում, երբ Շամախում իշխում էր վերջին չիրվանեան խան Մուստաֆան: Այդ խանութիւնը գաղթածները մեծ մասամբ հաստատուեցին Գեօգրափի գաւառում, և միայն աննշան մասը հաստատուեց Շամախու գաւառում: Ղաւազէցիները նաև ալթմ խօսում են զարաբաղու հալ բարբառով: Յիշած գիւղերից միայն Գերմանիան է, որի բնակիչները Պարսկաստանից 30-ական թականներին գաղթածներ են:

Հայերը բռնած ունեն գաւառի բլրալին մասը որ և խաղողի ալգիների մասն է: Ալլտեղ ձգող լեռնաշղթան Բողզաղ է կոչւում, որը խաղողի շերտում 3000 ոտնաչափից աւելի բարձր չի գնում, իսկ անտառալին մասում հասնում է մինչ 5000 ոտնաչափ ծովի մակերևոյթից:

Ղաւազէի ունեցած հողը հետեւեալ թւերով է արտաբերւում. խաղողի ալգիներ՝ 30 դեսեատին, պտղի ալգիներ չկան, վարելահող՝ ջրովի չկալ, անջրդի՝ 1700 դեսեատին, խոտահար չկալ, արօտատեղ և անպէտք հողեր 1250 դեսեատին: Տաւար՝ լծկան 587, կով 438, մանր 622, ձի և ջորի 100, էշ 43: Հարկեր՝ ծխահարկ 1552 ռ., զեմտուակին 1401 ռ., հաւսարակաց՝ 898 ռուբլի ¹⁾:

¹⁾ Այդ տեղեկութիւնները քաղած են պ. Ն. Արեւեանի հետազոտութիւնից *Экономическій бытъ госуд. крестьянъ Геокчайскаго и Шемахинскаго уѣздовъ, Бакинскоѣ губ., изслѣдованіе Н. А. Абелова*, տպւած *„Матеріалы для изученія экон. быта госуд. кр. Закавказскаго края, հատար VI, մասն երկրորդ, Тифлисъ 1887 года.*

Ղալաղէում ահա չորս տարի է, որ բացւել էր հալոց եկեղեցական ծխական միդասեան ուսումնարան, որին Բաքւի Մարդասիրական ընկերութիւնը նպաստ էր տալիս առաջ 125 ուսւրլի, անցեալ տարւանից զէս՝ 200 ուսւրլի։ Այդ ուսումնարանը կենտրոնական ուսումնարան էր ճաւելջակալ հալ գիւղերի համար, որոնք ուղարկում էին ալնտեղ 20-ի չափ երեխաներ։ Ընդամենը նորանում սովորում էին մինչ 80-ի չափ աշակերտներ։

Ա. Ա.